Շ-96

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՇՈՒԳԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՌՈԲԵՐՏԻ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Է. 00.02-«Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Ա. Սաֆրաստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ.Ա. Բայբուրդյան
ք.գ.թ. Հ. Ռ. Նիկողոսյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. դեկտեմբերի 27-ին, ժամը 13:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2016 թ. նոյեմբերի 26-ին

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝ պ.գ.թ. Գ. Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Ատենախոսության թեմայի և բովանդակության արդիականությունը հենվում է առաջարկվող գիտական նոր դիրքորոշման վրա, որը ենթադրում է միջազգային միջնորդության երկու ոլորտների՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման (նորմալիզացման) և ժողովուրդների հաշտեցման գործընթացների պարտադիր տարանջատումը: Տվյալ հետազոտության տրամաբանությունը և տեսական գաղափարները գոյացել են մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունքում և հենվում են անձնական դիվանագիտական փորձի վրա՝ հատկապես հայ-թուրքական և Ղարաբաղյան բանակցություններում: Մի շարք միջնորդական նախաձեռնություններ, որոնք առաջարկվել են երրորդ երկրների և միջազգային հասարակական կազմակերպությունների կողմից՝ ներկայացվում և քննարկվում են առաջին անգամ: Ատենախոսության թեման արդիական է նաև այն առումով, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը կարևոր գործոն է դառնում տարածաշրջանային և գլոբալ անվտանգության համատեքստում: Այդ հարաբերությունների կարգավորման միջազգային միջնորդությունը նոր մեթոդաբանության կարիք ունի: Ատենախոսության վերջնամասում ներկայացված են մի քանի առաջարկներ այլընտրանքային ճանապարհային քարտեզի և միջազգային միջնորդության նոր ձևաչափ ստեղծելու վերաբերյալ:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է Հայաստանի արդի պատմության տեսանկյունից ամփոփել և վերլուծել ՀՀ անկախությունից հետո գոյացած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման միջազգային միջնորդության տարբեր դիվանագիտական նախաձեռնությունները: Պաշտոնական և հանրային դիվանագիտությունը դիտարկվել և հետազոտության է ենթարկվել Թուրքիայի և Հայաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգերի համեմատության տեսանկյունից՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատման օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտների, երրորդ երկրների դերի, ինչպես նաև միջնորդների կողմից կատարված մեթոդաբանական և քաղաքական բացթողումների համատեքստում:

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ժամանակակից պատմությունն է, որը դիտարկվում է Հայաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի և անվտանգության մարտահրավերների համատեքստում: Հետազոտության առարկան՝ այդ հարաբերությունների միջազգային միջնորդության մեթոդաբանությունն է, ինչպես նաև միջնորդ երկրների

աշխարհաքաղաքական շահերի և շարժառիթների վերլուծությունը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Աշխատանքում հետազոտվում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման միջազգային միջնորդության պատմությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Երևանի և Անկարայի միջև երկխոսության միջնորդությունը ձևավորվել և ձևափոխվել է հայ-թուրքական հակամարտության բովանդակային զարգացմանը զուգահեռ: Կարելի է առանձնացնել երեք «աշխարհաքաղաքական» ժամանակաշրջաններ. 1991-1995 թթ., երբ հայ-թուրքական հակամարտությունը միջազգային հանրության կողմից դիտարկվում էր որպես երկկողմ խնդիր, 1995-2001 թթ., երբ այն աստիճանաբար ստացավ տարածաշրջանային նշանակություն, 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո, երբ այն սկսեց դիտարկվել որպես համաշխարհային անվտանգության խնդիր: Վերջին շրջանն իր հերթին կարելի է բաժանել երկու փուլի՝ 2001-2008 թթ. (ֆուտբոլային դիվանագիտության նախապատրաստում) և 2008-2015 թթ. (շվեյցարա-ամերիկյան միջնորդության սկիզբ, զարգացում և կանխատեսելի ավարտ՝ Հայոց ցեղասպանության հարյուրամյակից առաջ):

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման և հայ-թուրքական հաշտեցման միջազգային միջնորդության գործընթացները դիտարկվում են պատմական և մեթոդաբանական տեսանկյուններից: Այդ միջնորդության բազմաշերտ փուլերը առաջին անգամ հետազոտվել են երկկողմ, տարածաշրջանային և գլոբալ անվտանգության տեսանկյունից: Ատենախոսությունում հստակ սահմանվել են քաղաքական հակամարտության լուծման երկու զուգահեռ բանակցային հարթակներ: Կարգավորման գործընթացը ներառում է առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատում և հայ-թուրքական սահմանի բացում: Հաշտեցման գործընթացը վերաբերում է պատմական անցյալի անաչառ քննարկմանը և պատմական արդարության վերականգմանը: Հետազոտությունը առաջին անգամ դասակարգում է երկու բանակցային հարթակները ոչ միայն ըստ նրանց բովանդակության և նպատակների, այլ նաև մասնակիցների կազմի ընտրության սկզբունքի համաձայն: Այս առումով այս մոտեցումը կարելի է կոնցեպտուալ նորույթ համարել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հետազոտության տեսանկյունից, ինչպես նաև նմանատիպ հակամարտությունների կարգավորման մեթոդաբանության համատեքստում: Կարգավորման գործընթացին մասնակցում են երկու երկրների իշխանությունները: Հաշտեցման հարթակը ենթադրում է երկու երկրների պաշտոնյաների հետ միասին՝ քաղաքացիական հասարակությունների և հայկական սփյուռքի լուրջ և հետևողական մասնակցություն բանակցային գործընթացին:

Անախոսության գլուխ 5-ում առաջարկված Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման միջնորդության այլընտրանքային ռազմավարությունը, որը հիմնված է հայ-թուրքական որակավորված արդյունաբերական գոտիների (ՈԱԳ) ստեղծման գաղափարի վրա, առաջին անգամ ներկայացվում է տվյալ ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ իրավական մեխանիզմների նկարագրության հետ միասին:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Հարթակ 1 (Track 1) դիվանագիտությունը սահմանվում է որպես հակամարտող կողմերի միջև ուղիղ կամ միջնորդված պաշտոնական երկխոսություն: Բանակցային գործընթացը սկսելուց առաջ կողմերը պետք է ֆորմալ հավանություն տան միջնորդ երկրների կամ կազմակերպությունների թեկնածությանը:

Մասնագիտական գրականության մեջ Հարթակ 1.5-ը (Track 1.5) համեմատաբար նոր հասկացություն է: Այս ձևաչափը ենթադրում է հանրային գործիչների և իշխանություններին մոտ կանգնած ներկայացուցիչների համատեղ մասնակցությունը բանակցային գործընթացին: Միջնորդները պետք է հստակ երաշխիք պահանջեն և ստանան առ այն, որ երկու կողմերի մասնակիցների անուղղակի կապը իրենց երկրների իշխանությունների հետ կայուն է և հուսալի:

Հարթակ 2-ը (Track 2) հանրային դիվանագիտության ամենահայտնի և տարածված ձևաչափն է: Հարթակ 2-ը ոչ պաշտոնական երկխոսություն է, որը սովորաբար լինում է միջնորդված: Ի տարբերություն Հարթակ 1.5-ի՝ այս ձևաչափը բացառում է այն բանակցողների մասնակցությունը, որոնք կարող են թեկուզև ձևական առնչություն ունենալ իրենց երկրների իշխանությունների հետ: Որոշ դեպքերում կարող է անուղղակի կապ լինել իշխանությունների հետ, սակայն այդ կապը կանոնավոր և ինստիտուցիոնալացված չէ, ինչպես Հարթակ 1.5-իդեպքում:

Հետազոտության կիրառական նշանակությունը

Ատենախոսության եզրակացությունները և առաջարկությունները կարող են կիրառվել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման դիվանագիտության Հարթակ 1, Հարթակ 1.5 և Հարթակ 2 միջազգային միջնորդական ձևաչափերում: Միջնորդների մեթոդաբանական սխալների վերլուծությունը՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և երկու ժողովուրդների հաշտեցման գործընթացների պարտադիր տարանջատումը, հետագա բանակցությունների համար ունի գործնական նշանակություն: Դիվանագիտական գործընթացը արդյունավետ վերսկսելու համար ատենախոսության մեջ առաջարկվում է միջոցառումների ճանապարհային քարտեզ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը

Հետազոտության տեսական գաղափարները և պատմագրական տվյալների վերլուծությունը ներառվել են հեղինակի գլոբալ և տարածաշրջանային անվտանգության դասընթացում՝ ԱՄՆ-ի Թավթս համալսարանի Իրավունքի և դիվանագիտության Ֆլեթչեր դպրոցում: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման և հայ-թուրքական հաշտեցման միջազգային միջնորդության վերաբերյալ դասախոսություններ են կարդացվել ԱՄՆ-ի Վելսլի քոլեջում և Բոստոնի համալսարանում: Հարվարդի համալսարանի Քենեդի կառավարման դպրոցում՝ Հայաստանից և Թուրքիայից ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել է սեմինար, որտեղ քննարկվել են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման այլընտրանքային սցենարներ: Հետազոտության արդյունքները քննարկվել են CSIS, Atlantic Council և Carnegie Endowment ռազմավարական հետազոտությունների հայտնի կենտրոններում՝ դռնփակ կոնֆերանսների, սեմինարների և համապատասխան փորձագետների հետ մասնավոր զրույցների ժամանակ: 2014 թ. օգոստոսին ՄԱԿ-ի գրասենյակում՝ Հայաստանում հավատարմագրված դիվանագետների համար կազմակերպված դասախոսության ընթացքում ատենախոսության հեղինակը ներկայացրել է շվեյցարա-ամերիկյան միջնորդության ձախողման պատճառների վերլուծությունը: Տվյալ թեմայով հեղինակը նաև դասախոսություններ է կարդացել ամերիկահայ կազմակերպությունների համար՝ ԱՄՆ-ի Բոստոն, Փրովիդենս և Վաշինգտոն քաղաքներում:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման մի շարք այլընտրանքային սցենարներ քննարկվել են պաշտոնական հանդիպումների ժամանակ՝ ատենախոսության հեղինակի դիվանագիտական աշխատանքի ընթացքում: Մասնավորապես՝ 2003 թ. հայ-թուրքական ՈԱԳ-ի ստեղծման հնարավորությունը քննարկվել է ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Ռիչարդ Արմիթեջի, Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Մարկ Գրոսմանի, Հայստանում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Օրդվեյի և Ադերբեջանում ԱՄՆ-ի դեսպան Ռոս Վիլսոնի հետ հեղինակի հանդիպումների ժամանակ:

Օգտագործված աղբյուրների և գրականության տեսություն

Ատենախոսությունը գրված է ամերիկյան, եվրոպական, ռուսական, հայկական, իսրայելական և մի շարք այլ աղբյուրների, հետազոտական և մասնագիտական գրականության ու փաստագրական նյութերի հիման վրա: Քանի որ աշխատանքի թեման վերաբերում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման և հայ-թուրքական հաշտեցման միջազգային միջնորդության գործընթացներին, շեշտը հիմնականում դրվում է երրորդ երկրների մասնագիտական կարծիքների և գրականության ուսումնասիրության վրա: Ատենախոսությունում ընդգրկված է նաև Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման և հաշտեցման պաշտոնական և հանրային միջնորդությանը վերաբերող թուրքական գիտական նյութերի և մամուլի ուսումնասիրությունը: Թուրք հեղինակների

աշխատանքներում կարգավորման և հաշտեցման գործընթացների տարանջատումը իսպառ բացակայում է: Եթե միջազգային միջնորդների դեպքում նմանատիպ մոտեցումը կարելի է դիտարկել որպես մեթոդաբանական բացթողում, ապա թուրք փորձագետները՝ կամ միտումնավոր խուսափում են այդ հարցի քննարկումից, կամ կատարում են քաղաքական պատվեր: Չուհադարը և Գյուլտեկին-Պունսմանը հիմնական ուշադրությունը դարձնում են հանրային դիվանագիտության հարթակին, միաձուլելով կարգավորման և հաշտեցման գործընթացները:[1] Գոյրգուլուն փորձում է բացահայտել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման խոչընդոտները, անտեսելով հաշտեցման գործընթացի կարևորությունը[2]: Բազմաթիվ գիտական աղբյուրների և համապատասխան մասնագիտական գրականության վերլուծությունը աղերսվում է խաղաղություն հաստատելու գործընթացի երկու տարբեր հարթությունների՝ կողմերի միջև հարաբերությունների կարգավորման և ժողովուրդների հաշտեցման ջանքերին: Հայաստանի և Թուրքիայի դեպքում հաշտեցումը ենթադրում է երկու երկրների բանակցային գործընթացին քաղաքացիական հասարակությունների և հայկական սփյուռքի լուրջ և հետևողական մասնակցություն[3]: Առանց քաղաքական նախապայմանների Հայաստան-Թուրքիա հարաբերությունների միջնորդված կամ ուղղակի կարգավորումը դիտարկվում է որպես հաշտեցման գործընթացի արդյունավետ ընթացքի անհրաժեշտ նախապայման: Սակայն հաշտեցման հիմնական դրույթների ընդգրկումը երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը վերաբերող արձանագրությունների տեքստում ոչ միայն արդյունավետ չէ, այլ կարող է միջնորդների ամբողջ ծրագրին խոչընդոտող գործոն հանդիսանալ: Սա այն կարևոր հանգամանքն է, որը հաճախ թերագնահատվում կամ ընդհանրապես անտեսվում է քաղաքական հակամարտության մեջ գտնվող երկրների միջև միջազգային միջնորդությանը վերաբերող մասնագիտական գրականության մեջ:

«Միջազգային միջնորդություն» հասկացությունը կարելի է սահմանել որպես հակամարտության մեջ գտնվող երկրների համար հավասարապես ընդունելի երրորդ կողմի ներգրավում բանակցային գործընթացի մեջ՝ երկկողմ հարաբերությունների կարգավորման նպատակով:

Լորենս Սասկինդի և Այլին Բաբիթի կարծիքով միջնորդությունը կամավոր ստանձնած առաքելություն է, որի նպատակն է աջակցել հակամարտող

---

[1] Çuhadar, Esra, Gültekin, Burcu Punsmann, Reflecting on the Two Decades of Bridging theDivide:Taking Stock of Turkish-Armenian Civil Society Activities, , TEPAV Yayınları, No:62, Ocak 2012, pp. 14-15.

[2] Görgülü, Aybars, *Towards a Turkish-Armenian Rapprochement?* , Insight Turkey, Vol.11/No 2/ 2009, pp. 19-29.

[3] Shougarian R., Evolution of American Interests in the Black Sea/South Caucasus Region and Mediation of Armenian-Turkish Relations. Normalization, reconciliation and transitional justice, Spectrum, Regional Security Issues: 2011, Center for Strategic Analysis, Yerevan, 2012.

կողմերին՝ կնճռոտ հարցերը լուծելու և փոխզիջումային համաձայնության հասնելու գործում, որն անհնար է առանց երրորդ կողմի ներգրավվածության[4]: Ջեկոբ Բերկովիցը և Ալիսոն Հյուստոնը սահմանում են «միջնորդություն» հասկացությունը որպես բանակցային գործընթացի շրջանակիընդարձակում, որտեղ երրորդ կողմը միջամտում է հակամարտության լուծման վերջնական արդյունքը փոխելու նպատակով[5]: Նյու Յորքի Արտաքին հարաբերությունների խորհրդի նախագահ Ռիչարդ Հասը առանձնացնում է արդյունավետ միջնորդության հետևյալ նախապայմանները[6].

- Հաջողության հասնելու կողմերի ցանկություն,
- Բանաձև, որը շահեկան է բոլոր կողմերի համար,
- Բոլորի համար ընդունելի բանակցային գործընթաց,
- Բանակցված փոխզիջումներին հավատարիմ մնալու ունակ քաղաքական ղեկավարություն:

Մինչդեռ Ջեֆրի Ռուբինի կարծիքով՝ միջազգային միջնորդության կամ օժանդակության բարեհաջող ընթացք և արդյունք ապահովելու համար անհրաժեշտ են երեք նախադրյալներ[7].

- Բանակցողների ցանկություն և կամք կարգավորելու կամ ամբողջությամբ լուծելու տվյալ հակամարտությունը,
- Միջնորդների ներգրավման հնարավորություն,
- Միջնորդների մասնագիտական հմտությունների և ունակությունների առկայություն:

Կրոքերը, Աալը և Հեմփթոնը գտնում են, որ բանակցային գործընթացի արդյունավետ լինելու կարևորագույն գրավականը միջնորդների պատրաստակամության դրսևորումն է: Յուրգեն Դեդրինգը ընդգծում է միջազգային միջնորդությանը վերաբերող մասնագիտական գրականության մեջ տեղ գտած տերմինաբանական անհստակությունները: Դա է պատճառը, որ տարբեր գիտնականներ հակամարտությունների կարգավորման փուլերի մասին խոսելիս, օգտագործում են տարատեսակ տերմիններ, ինչպես օրինակ՝ «հակամարտության կանխարգելում» և «ճգնաժամի կառավարում ուվերացում»[8]: Անդրադառնալով բանակցությունների ավարտական փուլում

[4] Susskind Lawrence and Babbitt Eileen, "Overcoming the Obstacles to Effective Mediation of International Disputes," in Jacob Bercovitch and Jeffrey Z. Rubin eds. Mediation in International Relations, Multiple Approaches to Conflict Management (Great Britain: Macimillian Press LTD, 1992)

[5] Bercovitch Jacob, and Houston, Allison, "The Study of International Mediation: Theoretical Issues and Empirical Evidence," in Jacob Bercovitch ed. Resolving International Conflicts: The Theory and Practice of Mediation (Boulder, CO: Lynne Rienner, 1996): 12.

[6] Haass, Richard, Conflicts Unending: The United States and Regional Disputes, New Haven, Conn.: Yale University Press, 1990.

[7] Rubin, Jeffery Z. (1991). Psychological Approach. In Victor Kremenyuk ed. International Negotiation. San Francisco: Jossey-Bass Publishers.

[8] Dedring, Juergen, On Peace in Times of War: Resolving Violent Conflicts by Peaceful Means, The International Journals of Peace Studies, available at:http://www.gmu.edu/programs/icar/ijps/vol4_2/dedring.htm

միջնորդների առաքելությանը, կոնֆլիկտաբանները հաճախ օգտագործվում են խնդրի «վերացում» կամ «կարգավորում» տերմինները: Սակայն գիտական ձևակերպումների ու սահմանումների չհամակարգված բազմազանությունը հակասական է և կարող է հանգեցնել բացասական հետևանքների[9]: Վերոհիշյալ տերմինաբանական անհստակության վերաբերյալ Յոհան Գալտունգը այն կարծիքին է, որ միջպետական հակամարտությունները չափազանց բարդ ու բազմաշերտ երևույթներ են: Գալտունգը իրավացիորեն առանձնացնում է հակամարտությունների «թաքնված» ներքին պատճառները և հետևանքները[10]: Գալտունգի կարևոր նկատառումներից մեկը այն է, որ առաքելության ավարտական փուլում միջնորդները պետք է ձգտեն հակամարտության վերսկսումը բացառելու համապատասխան երաշխիք ստանալ[11]:

Յուրաքանչյուր միջպետական հակամարտություն ունի իր առանձնահատկությունները: Հետևաբար, ամեն մի առանձին դեպքումմիջնորդների մոտեցումը և կարգավորման մեթոդաբանությունը պետք է տարբերակված լինի: Նույնը վերաբերվում է համապատասխան մասնագիտական գրականությանը, որտեղ մի կողմից պետք է խուսափել անտեղի ընդհանրացումներից, իսկ մյուս կողմից՝հստակեցնել օգտագործվող տերմինները:

Վերջին քսանհինգ տարվա ընթացքում հայ-թուրքական բանակցությունների պաշտոնական և հանրային հարթակներում միջազգային միջնորդները թույլ են տվել մի շարք մեթոդաբանական սխալներ: Հնարավոր կլիներ բացթողումներից խուսափել, եթե միջնորդության մեթոդաբանության անտեղի ընդհանրացման փոխարեն կիրառվեր տարբերակված մոտեցում: Մասնավորապես, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանի կարծիքով, հայ-թուրքական հակամարտության և մյուս նմանատիպ քաղաքական կամ պատմական հակամարտությունների միջև կա սկզբունքային տարբերություն: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների յուրահատկությունը հաճախ անտեսվում է ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ, որտեղ շարունակվում է դիվանագիտական հարաբերություններ չհաստատած հարևան պետությունների միջև առկա խնդիրների ընդհանրացումը[12]:

Հիշատակելով բրիտանական հայտնի կոնֆլիկտաբան Գ.Ռ. Բարիդջի մենագրությունը, Ռ. Սաֆրաստյանը նշում է, որ Հայաստան-Թուրքիա

[9] Ibid.

[10] Galtung, Johan. 1996. Peace by Peaceful Means. Peace and Conflict, Development and Civilization. PRIO. London & Thousand Oaks & New Delhi: Sage

[11] Ibid.

[12] Safrastyan, Rouben, Armenian-Turkish Relations: From Interstate Dispute to Neighborliness, CPS International Policy Fellowship Program, 2003-2004, p.13, available at: http://www.academia.edu/2265436/Armenian-Turkish_relations_from_interstate_dispute_to_neighborliness, consulted June 11, 2012.

հարաբերությունները ընդհանրապես դուրս են մնացել տեսական ընդհանրացումներից, մինչդեռ դրանք կարող էին երկկողմ հարաբերությունների բացակայության պայմաններում «ոչ կոնվենցիոնալ դիվանագիտության» յուրահատուկ օրինակ ծառայել[13]:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ Վահրամ Տեր-Մաթևոսյանը, խաղաղություն հաստատելու երկու տարբեր հարթությունների սահմանման մասին խոսելիս, նշում է, որ երկկողմ բանակցություններում Հայաստանը ներկայացնող պատվիրակությունը ի սկզբանէ գերադասում էր օգտագործել «կարգավորում» տերմինը: Հայկական կողմի համոզմամբ՝ հաշտեցումը, որը շատ ավելի երկարաժամկետ ու բարդ գործընթաց է, չի կարող նախորդել հարաբերությունների կարգավորման գործընթացին: Կարգավորումը, հայ դիվանագետների պատկերացմամբ, ենթադրում է վստահություն ներշնչող կոնկրետ քայլեր: Այդ քայլերը ազդակ կլինեն հայ հասարակության համար առ այն, որ Թուրքիան իսկապես պատրաստ է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը և հետագա հաշտեցմանը[14]:

Երկու հարևան երկրներում միմյանց նկատմամբ վստահության բացակայությունը լուրջ մարտահրավեր է դարձել միջազգային միջնորդների համար: Դիվանագիտական կապերի և հաղորդակցության անհրաժեշտ խողովակների բացակայությունը կամ անկատարությունը բարդացնում է կարգավորման բանակցությունների միջնորդությունը՝ բացասաբար ազդելով դրա արդյունավետության վրա[15]:

ՀՀ Արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանը Հայաստան-Թուրքիա հարաբերությունները բնութագրում է որպես «բավականին բարդ, քանի որ մի կողմից առկա է անցյալի բեռը, մյուս կողմից՝ տարածաշրջանում բարիդրացիական հարաբերություններ հաստատելու, խաղաղության և կայունության մեջ ապրելու հրամայականը»[16]: Այս ձևակերպումը տալով, Վ. Օսկանյանը բևեռացնում է հաշտեցման և կարգավորման գործընթացները, դրանք դնելով հակասության մեջ, մինչդեռ մեր կարծիքով՝ տարանջատված լինելով հանդերձ, այս երկու դիվանագիտական հարթակները պետք է միշտ լինեն ներդաշնակ:

Հայ-թուրքական զուգահեռ դիվանագիտության հարթակի և Հայաստան-Թուրքիա պաշտոնական բանակցությունների միջև կապը քննության է ենթարկվել ԹՀՀՀ-ի համակարգող՝ Դեյվիդ Ֆիլիփսի «*Diplomatic History, The Turkey-Armenia Protocols*»[17] գրքի և ԱՄՆ-ի Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում նրա կողմից ներկայացված զեկույցի[18] մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա: Ատենախոսությունում առանձին ուշադրություն է դարձվում ԹՀՀՀ-ի կազմի ընտրության վերաբերյալ ամերիկահայ գիտնական Մուրադ Մուրադյանի դիտարկումներին[19]:

Հայ-թուրքական Ցյուրիխի արձանագրությունների և պաղեստինա-իսրայելական միջանկյալ հարթակի դիվանագիտության արդյունքում ստորագրված Օսլոյի համաձայնությունների միջև մեթոդաբանական զուգահեռները հետազոտվել են Ավի Շլաիմի «*The Rise and Fall of the Oslo Peace Process*»[20] մենագրության և Դին Փյունիյի կողմից խմբագրված «*Ripeness Theory and the Oslo Talks*»[21] գիտական հոդվածների ժողովածուի ուսումնասիրության հիման վրա:

«Նյու Յորք Թայմս» օրաթերթում Հայոց ցեղասպանության հարյուրամյակի նախօրեին հրատարակված հոդվածում, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նշում է, որ նույնիսկ եթե մի կողմ դնենք պատմական արդարության հարցը, թուրք-հայկական սահմանը շարունակում է փակ մնալ: Դա խանգարում է Հարավային Կովկասի բնականոն զարգացմանը[22]: Սա կարևոր փաստարկ է, քանի որ եթե հայ-թուրքական հաշտեցումը կարելի է դիտարկել որպես երկկողմ խնդիր, ապա Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը պետք է քննության առնել աշխարհաքաղաքական զարգացումների տարածաշրջանային համատեքստում:

Ատենախոսությունում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման միջնորդությունը դիտարկվում է նաև գլոբալ և տարածաշրջանային զարգացումների տեսանկյունից: Դրա վրա է հիմնված նշանավոր ռուսաստանցի փորձագետ Սերգեյ Մարկեդոնովի մենագրությունը, որը վերաբերում է 2008 թ. ռուս-վրացական պատերազմի հետևանքներին և Սևծովյան տարածաշրջանում ու Հարավային Կովկասում ուժերի

---

[13] Ibid.

[14] Ter-Matevosyan, Vahram, Track Two Diplomacy between Armenia and Turkey: Achievements and Limitations, Caucasus Analytical Digest No 86, July 26, 2016.

[15] Görgülü, Aybars; Gündogar, Sabiha Senyücel; Iskandaryan, Alexander; Minasyan, Sergey, Turkey-Armenia Dialogue Series: Breaking the Vicious Circle, TESEV-Caucasus Institute Joint Report, 2009.

[16] Օսկանյան, Վարդան, Անկախության ճանապարհով, Փոքր երկրի մեծ մարտահրավերները, Նախարարի օրագրից, էջ 149, Սիվիլիթաս Հիմնադրամ 2013:

[17] Phillips, David L., Diplomatic History, The Turkey-Armenia Protocols, p. 10; p.23; Columbia University, Institute for the Study of Human Rightsin collaboration with theFuture of Diplomacy Project, Harvard Kennedy School, 2012.

[18] Phillips, David L. Senior Fellow, Atlantic Council of the United States Visiting Scholar, Center for the Study of Human Rights at Columbia University, Testimony to the U.S. House Foreign Affairs Committee, Subcommittee on Europe May 14, 2009 Posted at http://foreignaffairs.house.gov/111/phi051409.pdf, consulted February 11, 2013.

[19] Mooradian, Moorad, Reconciliation: A Case Study of the Turkish-Armenian Reconciliation Commission, Working Paper N 24, March 2004, Institute for Conflict Analysis and Resolution, George Mason University.

[20] Pruitt, Dean G., Ripeness Theory and the Oslo Talks, International Negotiation Journal, Lessons Learned from the Middle East Peace Process, guest editor Dean G. Pruitt Abstracts, Vol. 2 No. 2, 1997

[21] Shlaim, Avi,Chapter 11: The Rise and Fall of the Oslo Peace Process,International Relations of the Middle East, in Louise Fawcett ed, Oxford,Oxford University Press, 2005, 241-61.

[22] Op-ed piece by President Serge Sargsyan, International New York Times, September 24, 2014, available at:http://armenpress.am/eng/news/777589/, last consulted December 12, 2014.

վերաբաշխման վրա ազդեցությանը[23]: Նույն համատեքստում ուսումնասիրվում են ամերիկյան և եվրոպական փորձագետների՝ Թոմաս դե Վաալի, Ֆիոնա Հիլի, Քարոլ Մագդալովիցի, Սվանթե Քորնելի, Իգոր Տորբակովի, Ջեյմս Վառհորլայի և Պյոտր Զալևսկու գիտական աշխատանքները: Տարածաշրջանային աշխարհաքաղաքականության զարգացումների վերաբերյալ հայկական տեսակետը ներկայացվում է Ռիչարդ Կիրակոսյանի, Ալեքսանդր Իսկանդարյանի և Հակոբ Չաքրյանի վերլուծությունների քննության հիմնվան վրա: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման նշանակությունը չի կարելի տարանջատել արդի գլոբալ անվտանգության մարտահրավերներից: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը համընդհանուր եվրոպական խնդիր է, որը նաև ունի ռուսական, միջինարևելյան և տրանս-ատլանտյան աշխարհաքաղաքական ընդգրկում: Հետևաբար հայ-թուրքական հակամարտության կարգավորումը պետք է լուծում ստանա եվրասիական և եվրանտլանտյան անվտանգության համատեքստում:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսության **ներածությունում**՝ համառոտ պատմագրական և մեթոդաբանական ակնարկից հետո, ամփոփվում և վերլուծվում են հայ-թուրքական երկխոսության պաշտոնական դիվանագիտության (Հարթակ 1), միջանկյալ հարթակի դիվանագիտության (Հարթակ 1.5) և հանրային դիվանագիտության (Հարթակ 2) միջազգային միջնորդական նախաձեռնությունները: ԱՄՆ-ի կողմից հովանավորված հայ-թուրքական երկխոսության Հարթակ 1, Հարթակ 1.5 և Հարթակ 2 ձևաչափերը, ֆուտբոլային դիվանագիտության շվեյցարա-ամերիկյան միջնորդությունը և մի շարք այլ՝ ավելի համեստ, միջնորդական նախաձեռնությունները դիտարկվում են տարբեր տեսանկյուններից՝ պատմական հարթության մեջ և միջազգային անվտանգության համատեքստում: Այս առումով՝ զուգահեռներ են անցկացվում Ցյուրիխի արձանագրությունների և պաղեստինա-իսրայելական միջանկյալ հարթակի դիվանագիտության արդյունքում ստորագրված Օսլոյի համաձայնությունների միջև; Վերլուծության են ենթարկվում երկու բանակցային գործընթացների միջնորդության մեթոդաբանության ընդհանրությունները և տարբերությունները: Նույն համատեքստում ներկայացվում է ֆուտբոլային դիվանագիտության միջնորդությանը նախորդող Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (ԹՀՀՀ) դերն ու գործունեությունը:

Ատենախոսության **առաջին գլխում**, հայ-թուրքական ֆուտբոլային դիվանագիտության համատեքստում համառոտ ներկայացվում է սպորտային

[23] Markedonov, Sergei, The Big Caucasus. The Consequences of the "Five Day War", Threats and Political Prospects, pp. 21-35 International Center for Black Sea Studies, 2009, Athens, Multimedia, Ltd.

դիվանագիտության տարբեր նախաձեռնությունների պատմությունը: Դրան հաջորդում է Թուրքիայի Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) **«զրո խնդիրներ հարևանների հետ»** արտաքին քաղաքականության համապարփակ վերլուծությունը: Ահմեդ Դավութողլուի հայեցակարգային նորարարությունները դիտարկվում են միջազգային միջնորդության համատեքստում և ՀՀ ներկայիս *նախաձեռնողական* արտաքին քաղաքականության հետ համեմատության մեջ: Զուգահեռներ են անցկացվում նախագահ Թուրգութ Օզալի կառավարման տարիների հետ, երբ դեռ ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ նա փորձում էր ոչ պաշտոնական կապ հաստատել ամերիկահայության հետ՝ ապագայում ԱՄՆ-ի իշխանությունների կողմից միջնոդված երկխոսություն սկսելու նպատակով:

Վերլուծվում են Շվեյցարիային՝ որպես հայ-թուրքական երկխոսության միջնորդ հրավիրելու Թուրքիայի նախաձեռնության դրդապատճառները: Ամփոփվում է նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի և Թուրքիայի մասնակցությունը մի շարք տարածաշրջանային և արտատարածաշրջանային հակամարտությունների միջնորդական նախաձեռնություններին:

Հայ-թուրքական երկխոսության միջազգային միջնորդության մեթոդաբանության հիմնական սխալը երկկողմ հարաբերությունների կարգավորման և ժողովուրդների հաշտեցման գործընթացների միաձուլումն է:

- Կարգավորման (նորմալիզացման) բանակցությունների փաթեթը պետք է ներառի հայ-թուրքական սահմանի բացումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը առանց քաղաքական նախապայմանների: Այդ գործընթացին կարող են մասնակցել միայն երկու երկրների կառավարությունները միջազգային միջնորդների հետ միասին:
- Հաշտեցման բանակցային գործընթացին՝ պատմական անցյալի անաչառ ու չնախապաշարված քննարկմանը, արժանապատիվ ապագա կառուցելու նպատակով, պետք է մասնակցեն երկու երկրների կառավարությունները, հայկական սփյուռքի, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչները:

Հաշտեցումը շատ ավելի երկարաժամկետ և բարդ գործընթաց է: Հայաստանի և Թուրքիայի դեպքում այս դիվանագիտական ձևաչափը ենթադրում է երկկողմ բանակցություններին հանրային գործիչների և հայկական սփյուռքի ներկայացուցիչների լուրջ և հետևողական մասնակցությունը: Սահմանվել է նաև միջազգային միջնորդության և օժանդակության կարևոր տարբերությունը: Այդ հասկացությունների միջև սահմանագիծը ժամանակակից դիվանագիտության մեջ այնքան անորոշ է, որ երբեմն այս երկու քաղաքագիտական տերմինները ներկայացվում են որպես հոմանիշներ: Միջնորդությունը ենթադրում է բանակցային գործնթացի մեջ երրորդ կողմի բովանդակային մասնակցություն, որի արդյունքում պետք է ձևավորվի ճանապարհային քարտեզ՝ առկա խնդիրը լուծելու համար, մինչդեռ օժանդակողները հիմնականում զբաղվում են կազմակերպական հարցերով:

Գլուխ 2-ում Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (ԹՀՀՀ) գործունեության հակասական արդյունքները ներկայացվում են ԹՀՀՀ-ի և Նյու-Յորքում գտնվող Անցումային արդարադատության կենտրոնի համագործակցության համատեքստում: Հատուկ ուշադրություն է դարձվում ԹՀՀՀ-ի առաքեությանը վերաբերող խնդիրներին, սփոյռքի և Հայաստանի արդարացի մտահոգություններին: Զուգահեռներ են անցկացվում պաղեստինա-իսրայելական բանակցային գործընթացի հետ: Օսլոյի համաձայնությունների և Յյուրիխի արձանագրությունների ճանապարհային քարտեզները տարբերվում են նրանով, որ առաջին դեպքում Հարթակ 1.5-ի դիվանագիտական ձևաչափին ամիջապես հետևեց Հարթակ 1-ի տրամաբանական միջամտությունը, և 1993 թ. սեպտեմբերի 13-ին Սպիտակ տանը տեղի ունեցավ պատմական համաձայնության ստորագրման արարողությունը: Երկրորդ դեպքում Հարթակ 1.5 ձևաչափի (բանակցային գործընթաց ԹՀՀՀ-ի շրջանակներում) և Հարթակ 1-ի (ֆուտբոլային դիվանագիտության, Յյուրիխյան արձանագրություններ) գործընթացների միջև 7 տարի էր անցել:

Գլուխ 3-ում շվեյցարա-ամերիկյան միջնորդության տապալման հետ միասին, որը կարելի է բնութագրել որպես **«փայլուն դիվանագիտական ձախողում»,** վերլուծվում են բոլոր շահագրգռված կողմերի և միջնորդների ֆուտբոլային դիվանագիտության արդյունքում ձեռք բերված կարճաժամկետ նվաճումները: Երկարաժամկետ հետևանքները դիտարկվում են Հայաստանի անվտանգության և քաղաքական կողմնորոշման վրա նրանց հնարավոր ազդեցության տեսանկյունից:

Գլուխ 3-ը և ատենախոսության առաջին մասը եզրափակվում են Ղարաբաղյան բանակցությունների և հայ-թուրքական երկխոսության միջև հաստատված իրական և արհեստական կապի համապարփակ վերլուծությամբ: Այստեղ նաև ներկայացվում և վերլուծվում է ԵՄ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ և Սևծովյան տնտեսական համագործակցություն (ՍԾՏՀ) կազմակերպությունների առկա և ապագայում հնարավոր միջնորդական դերակատարությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում: Գլուխ 4-ում համառոտ ներկայացվում են մի շարք այլ միջազգային միջնորդական նախաձեռնություններ, որոնք առաջարկվել էին երրորդ երկրների կողմից Հարթակ 1-ի շրջանակներում.

- Կանադայի արտաքին գործերի նախարարության նախաձեռնությունը (2003 թ.),
- Լիբանանի վարչապետի առաջարկը (2002-2003 թթ.),
- Իտալիայի վարչապետի առաջարկը (2005 թ.):

Առանձին ենթագլխում ներկայացված մի շարք գերմանական, անգլիական և ամերիկյան հասարակական և լոբբիստական կազմակերպությունների կողմից առաջարկված օժանդակությունը և ծավալված գործունեությունը հիմնականում վերաբերվում է Հարթակ 2-ին՝ հանրային դիվանագիտության ձևաչափին: Նշվում և ուսումնասիրվում է միջնորդական

նախաձեռնությունների աշխարհագրական ծագումնաբանությունը և պատկանելիությունը: Գիտական հետազոտության արդյունքում կարելի է պնդել, որ երրորդ երկրների կողմից առաջարկված բոլոր վերոհիշյալ միջնորդական նախաձեռնությունները պայմանավորված են Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում այդ երկրների դիրքորոշումով: Այդ տեսանկյունից, կարելի է առանձնացնել միջնորդ երկրների երեք ենթախումբ.

1. Երկրներ, որոնց խորհրդարանները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը (Իտալիա, Կանադա, Լիբանան, Շվեյցարիա): Այս ենթախմբից միայն Շվեյցարիան է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հետևողական և համեմատաբար հաջողված օժանդակող միջնորդ: Այս երկրների միջնորդական նախաձեռնությունների հիմնական դրդապատճառներից մեկը՝ իրենց օրենսդիր իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու դիմաց Թուրքիային «վարձահատույց» լինելու յուրօրինակ դիվանագիտական հնարք էր:
2. Երկրներ, որոնք դեռ չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը կենտրոնական իշխանության մակարդակով և որոնք 1915 թ. դեպքերը նկարագրելու համար ցեղասպանություն տերմինի փոխարեն օգտագործում են իրավաբանական ուժ չունեցող հոմանիշներ (ԱՄՆ):
3. Երկրներ, որոնք հակառակ իրենց քաղաքական նկատառումների վերջերս ճանաչել են Հայոց ցեղասպանությունը՝ անուղղակիորեն ընդունելով իրենց մասնակի պատասխանատվությունը մարդկության դեմ գործած այդ հանցագործության համար (Գերմանիա):

Հարթակ 1.5 և Հարթակ 2 ձևաչափերի առումով հնարավոր է կատարել հետևյալ դասակարգումը.

1. Հարթակ 1.5-ը, որը զբաղվում էր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և հաշտեցման հարցերով (ԹՀՀՀ):
2. Հարթակ 2-ը, որը հիմնականում զբաղվում էր հաշտեցման խնդիրներով (հայ և թուրք պատմաբանների աշխատանքային խումբ):
3. Հարթակ 2-ի նախաձեռնություններ, որոնք հիմնականում վերաբերվում էին հայ-թուրքական հարաբերությունների նորմալիզացման օժանդակությանը՝ հայ-թուրքական սահմանի բացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցերին (Թուրք-հայկական բիզնես խորհուրդ):
4. Հարթակ 2 քաղաքացիական նախաձեռնություններ, որոնք ուղղիղ առնչություն չունեն սահմանի բացման կամ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հետ: Փոխարենը դրանք անհրաժեշտ մթնոլորտ են ստեղծում հարաբերությունների կարգավորման և ժողովուրդների միջև հաշտեցման համար (Հայ-թուրքական հաշտեցմանը նպաստող՝ մեծահասակների կրթության և բանավոր պատմության գերմանական նախախագիծ, ԱՄՆ-ի դեսպանության և ԵՄ Արևելյան գործընկերության կողմից ֆինանսավորվող՝ հայ-թուրքական համագործակցությունը կինոարվեստի բնակավառում):

Գլուխ 4-ի մի ենթագլուխ նվիրված է Ցյուրիխյան արձանագրությունների վերաբերյալ Ռուսաստանի քաղաքականության վերլուծությանը և Մոսկվայի հնարավոր դերակատարությանը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման միջնորդության գործընթացում: Արևելյան Ուկրաինայում և Սիրիայում իրավիճակի պատճառով՝ Ռուսաստանի միջազգային մեկուսացումը սահմանափակում է մոտ ապագայում Արևմուտքի հետ համագործակցելու Ռուսաստանի հնարավորությունները: Մյուս կողմից՝ այս հանգամանքը Մոսկվայի քաղաքականությունը այլ տարածաշրջաններում դարձնում է շատ ավելի նախաձեռնողական: Դավութողլուի **«զրո խնդիրներ հարևանների հետ»** հայեցակարգի բառապաշարը և տերմինաբանությունը կարող են հեշտությամբ կիրառվել Սևծովյան տարածաշրջանում՝ Պուտինի և Լավրովի կողմից տարվող քաղաքականության մեջ: Որոշ մարտավարական և ռազմավարական դաշինքներ, որոնք անհավանական էին թվում 5-7 տարի առաջ, այսօր աստիճանաբար դառնում են իրականություն: Թուրքիայի հետընդլայնված համագործակցությունը՝նախագահ Պուտինի վարչակազմի կողմից ներկայումս հետազոտվող և օգտագործվողաշխարհաքաղաքական մայրուղիներից մեկն է: Այս նոր աշխարհաքաղաքական համատեքստում կարելի է ակնկալել Մոսկվայի դերի կտրուկ բարձրացում՝ որպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ապագա միջնորդ:

Գլուխ 5-ը և ատենախոսության եզրափակիչ մասը առաջարկում են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման այլընտրանքային դիվանագիտություն և միջնորդական մեթոդաբանություն, բանակցային նոր ճանապարհային քարտեզի հետ միասին: Նախապատվությունը տրվում է ավելի փոքր, բայց իրատեսական և կիրառելի միջնորդական ծրագրերին՝ սահմանային առևտրի նոր ձևաչափերին, որոնք կարող են մեծ դեր խաղալ երկու հարևանների միջև հարաբերությունների բարելավման գործում: Հայ-թուրքական «որակավորված արդյունաբերական գոտիների» (Qualified Industrial Zones) ստեղծման հնարավորությունը գտնվում է առաջարկվող այլընտրանքային դիվանագիտության և միջնորդության կիզակետում: Նման ծրագիրը ԱՄՆ-ի Կոնգրեսում համապատասխան օրենսդրական բանաձևի ընդունման դեպքում կարող է իրականացվել ԱՄՆ-ի միջնորդությամբ և Հորդանանի կամ Իսրայելի օժանդակությամբ: Դա կբերի հայ-թուրքական սահմանի մասնակի բացմանը և որակավորված արդյունաբերական գոտիներում (ՈԱԳ) արտադրված ապրանքների տուրքազերծ արտահանմանը ԱՄՆ-ի շուկա: ՈԱԳ-ի մեխանիզմը ստեղծվել և առաջարկվել է 1996 թվականին նախագահ Քլինտոնի վարչակազմի կողմից՝ Միջին Արևելքում հակամարտության մեջ գտնվող երկրներին աջակցելու համար: Իսրայելը և Հորդանանը, որոնք այդ միջնորդական ծրագրի ակտիվ մասնակիցներն էին, հետագայում ԱՄՆ-ի հետ ստորագրեցին ազատ առևտրի պայմանագրեր: Այդ պատճառով նրանք իրավասու են դառնալ հայ-թուրքական ՈԱԳ-ի ստեղծման օժանդակող: Աշխարհաքաղաքական որոշ զարգացումների և սահմանափակումների պատճառով՝ ներկա փուլում առաջարկվում է ընտրել

հորդանանյան տարբերակը: Հայ-թուրքական ՈԱԳ-ի ստեղծման գաղափարը մի քանի անգամ ոչ պաշտոնական ձևով քննարկվել է Հայաստանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի և Իսրայելի համապատասխան պետական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների կողմից:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

ԽՍՀՄ-ի փլուզումից ի վեր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման միջազգային միջնորդությունը հիմնականում կրել է **«սեզոնային»** բնույթ: Մինչև 2007-2008 թթ., բացառությամբ 1.5 ձևաչափի շրջանակներում ԹՀՀՀ-ի գործունեության, Հայաստանի նկատմամբ Թուրքիայի դիվանագիտությունը ակտիվանում էր գարնան ամիսներին: Որպես կանոն՝ այդ դիվանագիտության ալիքը հերթական անգամ մարում էր ամեն ապրիլի 24-ից հետո: Չնայած շվեյցարա-ամերիկյան միջնորդությունը և ֆուտբոլային դիվանագիտությունը շատ ավելի երկարաժամկետ քաղաքական գործընթացներ են, դրանք նույնպես աստիճանաբար ստացան **«սեզոնային»** բնույթ, քանի որ տրամաբանական ավարտ ունեցան մինչև Հայոց ցեղասպանության հարյուրամյակը: Սակայն մեր կարծիքով՝ առկա աշխարաքաղաքական բուռն զարգացումների արդյունքում «սեզոնային դիվանագիտության» պաշարը սպառված է:

Մեր կանխատեսումներով, որոնք ներկայացված են Հավելված 3-ում՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման միջազգային միջնորդության նոր փուլը ձևավորվելու է համաշխարհային անվտանգության երեք հիմնական գործոնների, մեկ տարածաշրջանային խնդրի և մեկ ներքին քաղաքական զարգացման ազդեցության ներքո.

- Ռուսաստան-ԱՄՆ և Ռուսաստան-ԵՄ հարաբերությունների կտրուկ վատթարացում:
- Սիրիական ճգնաժամ: Միջազգային հանրության կողմից Իրաքում և Սիրիայում Թուրքիայի բացասական և վտանգավոր դերակատարության վերաիմաստավորում:
- ԱՄՆ-Իրան միջուկային համապարփակ պայմանագրի ճակատագիր, երկու երկրների հարաբերությունների հետագա կարգավորման գործընթաց:
- Ադրբեջանի կողմից նոր պատերազմի սանձազերծման սպառնալիք:
- 2016 թ. հուլիսին տապալված հեղաշրջումից հետո՝ Թուրքիայում ներքին քաղաքական զարգացումների հետագա ընթացք:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումները

Մենագրություններ

- The Politics of Immaculate Misconception*: The Ides of the Post-Secular Age*. Gomidas Institute, London, 2013.
- Does Armenia Need a Foreign Policy? *The Turkish-Armenian Limbo, International Mediation and the Fragmented Identity of a Security-Conscious Region*, Gomidas Institute, London, 2016.

Հոդվածներ

- Armenian-Turkish Diplomacy: Track I Failures and Track II Prospects, Part II, ***Armenian Review* 54, no. 1-2,** Fall-Winter2015, pp. 17-32.
- Дипломатия Квалифицированных Индустриальных Зон (КИЗ). Альтернативный Сценарий Американского Посредничества в Нормализации Армяно-Турецких Отношений. ЦентральнаяАзия и Кавказ, Vol. 16, Issue 3-4, 2015.
- Armenian-Turkish Diplomacy: Track I Failures and Track II Prospects, Part II***Armenian Review* 54, no. 1-2** Spring-Summer 2013, pp. 17-50.
- Эволюция интересов США в Черноморско-Южнокавазском регионе и посредничество в армяно-турецких отношениях. Нормализзация, примирение ипереходное правосудие,Спектрум, Центр Стратегического Анализа,Вопросы Региональной Безопасности: 2011, Ереван 2012, стр. 26-39.
- From Near Abroad to the New Neighborhood, German Marshall Fund of the US, A New Transatlantic Strategy for the Black Sea region, 2004, pp. 48-56.
- "Stability in the Caucasus: Eight Principles of Regional Co-operation," *Central Asia and the Caucasus*, No1 (7), (2001), pp. 7-12.

ШУГАРЯН РУБЕН РОБЕРТОВИЧ

СОВРЕМЕННАЯ ИСТОРИЯ И МЕТОДОЛОГИЯ МЕЖДУНАРОДНОГО ПОСРЕДНИЧЕСТВА АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- «Всемирная история. международные отношения». Защита состоится 27-го декабря 2016 г., в 13:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Актуальность настоящего исследования опирается на новый академический подход, предлагаемый в контексте обязательного разделения двух аспектов международного посредничества в урегулировании армяно-турецких отношений.

- Формат **нормализаци** включает в себя открытие армяно-турецкой границы и установление двухсторонних дипломатических без политических предусловий. Этими вопросами должны заниматься исключительно правительства обеих стран при соответствующем международном посредничестве.
- Формат **примирения** –беспредрассудочного обсуждения исторического прошлого с целью построения достойного общего будущего- должен быть задействован при совместном участии армянского правительства, общественных организаций и диаспоры с одной стороны и турецкого правительства и общественности с другой.

Спонтанное объединение параллельных переговорных процессов: нормализации двухсторонних отношений и примирения между соседними народами является основной методологической ошибкой международных посредников *армяно-турецкойфутбольной дипломатии*.

Настоящая диссертация анализирует первопричины и прослеживает эволюцию подобной методологии международного посредничества начиная с распада СССР и создания независимой Республики Армения. Новые концепции и теоретический метод , применённые в диссертации, подкреплены дипломатическим опытом и непосредственном участием автора в турецко-армянских переговорах и карабахком мирном урегулировании с первого дня независимости.

Отдельная глава диссертации посвящена истокам и детальному анализу новой турецкой политики *нулевых проблем с соседями*. Проведены смысловые паралели с *про-активной внешней политикой* Республики Армения после 2008 г. В работе представлены 3 переговорных формата

армяно-турецкой дипломатии: официальные переговоры (Track1); общественная (народная) дипломатия (Track 2) и смешанный формат (Track 1.5)

Все посреднические инициативы рассматриваются в контексте политических интересов третьих стран и источников финансирования. Особое место уделено американо-швейцарскому посредничеству (Track1), приведшему к подписанию Цюрихских Протоколов в октябре 2009 г. Деятельность Турецко- Армянской Комиссии Примирения в 2001-2002 гг. (Track 1.5) рассматривается в сравнительном анализе её состава, формата переговоров и международного посредничества с палестино-израильскими переговорами, закончившимися подписанием Соглашений Осло в сентябре 1993 г. в Вашингтоне.

В дисертации также впервые освещены другие, менее значимые предложения третьих стран, неправительственных институтов, этнических и корпоративных организаций, по посредничеству армяно-турецких отношений. Потенциальная роль России как возможного будущего посредника нормализации армяно-турецких отношений рассматривается в контексте тектонических геополитических изменений.

Заключительная главадисертации предлагает альтернативный вариант опосредованного частичного урегулирования армяно-турецких отношений при потенциальном участии Иордана/Израиля. После отказа Анкары и Еревана ратифицировать Цюрихские Протоколы переговорный процесс оказался в тупике. С одной стороны, американо-швейцарское посредничество и челночная дипломатия 2008-2009гг, приведшие к сенсационному подписанию турецко-армянских протоколов, завысила планку ожиданий междунароного сообщества. С другой стороны, эйфория по поводу фундаментального решения одного из самых непростых конфликтов XX века оказалась кратковременной.Необходимо изучить и применить удачный опыт торгово- экономических програм, разработанных специльно для приграничных районов географических соседей, находящихся в состоянии политического конфликта. Настоящее исследование предлагает обсудить применимость проекта Квалифицированных Индустриальных Зон (КИЗ), предложенного администрацией Президента Клинтона для Израиля, Палестины, Египта и Иордании в 1996 г, в рамках процесса нормализации армяно-турецких отношений. Рассматривается возможность ограниченного (лимитированного) открытия армяно-турецкой границы как естественный и необходимый результат создания КИЗ в межграничном регионе Карс-Гюмри.

В заключение диссертации предлагается список мероприятий для изменения исчерпавшей себя американо-швейцарской дорожной карты нормализации армяно-турецких отношений.

ROUBEN ROBERT SHOUGARIAN

CONTEMPORARY HISTORY AND METHODOLOGY OF INTERNATIONAL MEDIATION OF ARMENIAN-TURKISH RELATIONS

The defense of the dissertation will take place at 13:00 on the 27th of December, 2016 at the meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History. International Relations" 07.00.02.

SUMMARY

The importance of this research rests upon academic innovations with regard to the mandatory separation of two aspects of peace building, normalization and reconciliation, with regard to the international mediation of Armenian-Turkish proximity talks.

The main methodological mistake made by the international mediators of Armenian-Turkish relations was an unjustified spontaneous merging of two negotiation formats, - normalization and reconciliation. The following is our definition of these formats:

- **Normalization** package should include the opening of the border and establishment of diplomatic relations between Turkey and Armenia without political preconditions. Solely the governments of the two countries with corresponding international mediation should deal it with.
- **Reconciliation**- an unprejudiced discussion of the historical past with a view to build a common dignified future - should be a joint undertaking by the Armenian government, public organizations and the Armenian Diaspora on the one hand, and the Turkish government and society on the other.

This dissertation outlines the above-mentioned dimensions in the context of the history of international mediation of Turkish-Armenian relations since the disintegration of the Soviet Union and beyond. The history of the US-sponsored Track I, Track 1.5 and Track II formats, Swiss-American facilitation of *football diplomacy* and other, less significant mediation activities are viewed from different angles, in the historical perspective and in the context of international security. In this regard, parallels are drawn between the roadmaps that led to the Zurich Protocols and Oslo Accords, while on the other hand a comparative description of mediation technique and methodology of those two major diplomatic undertakings has also beenoffered.

Theoretical concepts and argumentation are reinforced by personal diplomatic experience in conflict resolution, Armenian-Turkish and Nagorno Karabagh negotiations in particular. Some of the mediation initiatives, both by third countries and non-state actors are listed and discussed for the first time.

Detailed recommendations for alternative diplomacy, international mediation and a new Armenian-Turkish road map after the failure of football diplomacy and the Zurich Protocols are also included in the dissertation.

The collapse of the bipolar world order has changed the international security situation beyond recognition. Today's geopolitical disputes and the need to mediate them originate not only from current problems among regional neighbors, but also from dormant standoffs, the active phase of which seems to be long over. Comprehensive resolution of the latter is the key, and in the cases directly affecting global security, a necessary pre-requisite for the settlement of multiple regional problems of the present day.

The next diplomatic cycle of international mediation of Armenian-Turkish relationswill have to shape itself against the background of tectonic changes in today's geopolitics.